15.12.2021. N 171/2-Լ
Ինկորպորացիա առ 04.04.2025. N 100-Լ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՆԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(փոփ. 08.05.2023. N 130-Լ, 04.04.2025. N 100-Լ)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 171-Լ հրամանով հաստատված N 2 հավելվածի 9-րդ կետը և N 3 հավելվածի 20-րդ կետը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով բանավոր քննության հարցաշարը՝ համաձայն N 1 հավելվածի: (փոփ. 08.05.2023. N 130-Լ)

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ատեստավորման հարցաշարը՝ համաձայն N 2 հավելվածի: (կետը խմբ. 04.04.2025. N 100-Լ)

3. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի նախագահին և անդամներին, Հայաստանի

Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետին:

Ա. Քյարամյան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի նախագահի
15.12.2021 թ.
N 171/2-Լ հրամանի
(հավելվածը խմբ. 29.08.2022. N 137-Լ,
08.05.2023. N 130-Լ)

ՀԱՐՑԱՇԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՆԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ

1. **<u>Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք.</u>**

1) Քրեական օրենսդրության խնդիրները և սկզբունքները.
2) Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում.
3) Քրեական օրենսդրության հետադարձ ուժը.
4) Քրեական օրենքի գործողությունը տարածության մեջ.
5) <<Հանցանք>> հասկացությունը, դրա հատկանիշները և հանցանքի տեսակները.
6) Արարքը (գործողությունը կամ անգործությունը)
7) Շարունակվող և տևող հանցագործությունները.
8) Հանցագործությունների համակցությունը.
9) Հանցագործությունների ռեցիդիվը.
10) Հանցակազմի հասկացությունը, տարրերը և դասակարգումը.
11) Մեղքի հասկացությունը, դիտավորությունը և անզգուշությունը, դրանց տեսակները.
12) Քրեական պատասխանատվության սուբյեկտը, հանցագործության հատուկ սուբյեկտը.
13) Սխալը և դրա քրեաիրավական նշանակությունը.
14) Քրեական պատասխանատվության հասկացությունը և հիմքը.

15) Անմեղսունակությունը.

16) Առանց մեղքի վնաս պատճառելը.

17) Անհրաժեշտ պաշտպանությունը:

18) Ծայրահեղ անհրաժեշտությունը.

19) Հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը.

20) Մասնագիտական գործառույթների իրականացումը.

21) Հիմնավորված ռիսկը և սպորտային ռիսկը.

22) Օրենքի կամ իրավական այլ ակտերի պահանջները, հրաման կամ կարգադրություն կատարելը.

23) Օպերատիվ - հետախուզական գործառույթներ իրականացնող մարմինների հետ համագործակցելը.

24) Անհաղթահարելի ուժը, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը.

25) Հանցագործության նախապատրաստությունը.

26) Հանցափորձը և դրա տեսակները.

27) Հանցակցության հասկացությունը և հատկանիշները.

28) Հանցակիցների տեսակները և նրանց բնութագիրը.

29) Հանցակիցների պատասխանատվությունը.

30) Հանցակցությունը հատուկ սուբյեկտի կողմից կատարվող հանցագործություններում.

31) Հանցակցի սահմանազանցումը.

32) Հանցանքը մի խումբ անձանց կամ հանցավոր կազմակերպության կողմից կատարելը.

33) Քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները.

34) Պատժի հասկացությունը, դրա նպատակները և տեսակները.

35) Քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը.

36) Համաներում, ներում, դատվածություն.

37) Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակման հիմքերը.

38) Իրավաբանական անձի քրեական պատասխանատվության ընդհանուր

պայմանները: Իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցները.

39) Ցեղասպանությունը.

40) Զինված ընդհարման ժամանակ մշակութային արժեքները ոչնչացնելը, վնասելը, հափշտակելը, առգրավելը կամ դրանց նպատակային նշանակությունը փոփոխելը.

41) Սպանության հասկացությունը և տեսակները.

42) Սպանության ծանրացուցիչ հանգամանքները.

43) Ինքնասպանության հասցնելը, ինքնասպանության հակելը, ինքնասպանությանը նպաստելը.

44) Անզգուշությամբ կյանքից զրկելը.

45) Առողջությանը ծանր վնաս պատճառելը.

46) Առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը.

47) Առողջությանը թեթև վնաս պատճառելը.

48) Առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը հոգեկան խիստ հուզմունքի վիճակում.

49) Անզգուշությամբ առողջությանը ծանր, միջին ծանրության վնաս պատճառելը.

50) Մարդուն առևանգելը: Ազատությունից ապօրինի զրկելը.

51) Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը.

52) Հոգեբուժական կազմակերպությունում ապօրինի տեղավորելը կամ պահելը.

53) Հոգեկան ներգործությունը.

54) Ֆիզիկական ներգործությունը.

55) Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը.

56) Բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.

57) Սեքսուալ բնույթի բռնի գործողությունները.

58) Անառակաբարո արարք կատարելը.

59) Բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը.

60) Անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելը.

61) Ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը,

ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը.

62) Քվեարկության գաղտնիությունը խախտելը.

63) Կուսակցությանը անդամագրվելուն կամ անդամությունը դադարեցնելուն հարկադրելը կամ խոչընդոտելը.

64) Երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու կամ տարածելու հետ կապված գործողություններ կատարելուն հակելը կամ ներգրավելը.

65) Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ վաճառքը.

66) Անչափահասին հանցանքի կատարմանը հակելը կամ դրան մասնակից դարձնելը.

67) Հափշտակության հասկացությունը, առարկան.

68) Հափշտակության ծանրացնող հանգամանքները.

69) Ավազակությունը.

70) Գողությունը.

71) Կողոպուտը.

72) Խարդախությունը.

73) Վստահված գույքը հափշտակելը.

74) Համակարգչային հափշտակությունը.

75) Շորթումը.

76) Գույքը ոչնչացնելը կամ վնասելը.

77) Ապօրինի ձեռնարկատիրական գործունեությունը.

78) Խուլիգանությունը.

79) Կավատությունը և պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը.

80) Հանցավոր կազմակերպություն ստեղծելը կամ ղեկավարելը, հանցավոր կազմակերպությանը մասնակցելը.

81) Քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը կամ ղեկավարելը.

82) Հրազենի, դրա բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի և այլ նյութերի, սարքերի,

առարկաների ապօրինի շրջանառությունը.

83) Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը.

84) Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելը.

85) Ծառերը, թփերը կամ բուսածածկն ապօրինի հատելու կամ ապօրինի ձեռք բերված կոճղերը, ծառերը կամ թփերը տեղափոխելը.

86) Իրացնելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) ապօրինի շրջանառությունը կամ դրանք ապօրինի իրացնելը.

87) Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ կեղծելու կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր իրացնելու, պատրաստելը կամ օգտագործելը.

88) Ինքնիրավչությունը.

89) Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը.

90) Խոշտանգումը.

91) Պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից խուսափելը.

92) Արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելը.

93) Սուտ մատնությունը.

94) Հանցագործության մասին չհայտնելը.

95) Հրաման չկատարելը.

96) Ստորադասի (ենթակայի) նկատմամբ բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքը.

97) Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը կամ ժամանակին ծառայության վայր չներկայանալը.

98) Դասալքությունը.

99) Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը.

100) Իշխանազանցության կամ իշխանությունը չարաշահելը:

**2. <u>Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության իրավունք.</u>**

1) Անմեղության կանխավարկածը.

2) Քրեական հետապնդման հասկացությունը և տեսակները.

3) Քրեական հետապնդումը բացառող հանգամանքները և քրեական վարույթի կարճման հիմքերը.

4) Քննիչը որպես քրեական վարույթի հանրային մասնակից և նրա լիազորությունները.

5) Քննչական մարմնի ղեկավարի լիազորությունները.

6) Հսկող դատախազի լիազորությունները մինչդատական վարույթի ընթացքում.

7) Հետաքննության մարմնի լիազորությունները.

8) Մեղադրյալի և մեղադրյալի օրինական ներկայացուցչի իրավունքները և պարտականությունները.

9) Տուժողի իրավունքները և պարտականությունները.

10) Մահացած տուժողի կամ տուժող ճանաչվելու ենթակա անձի փոխարեն տուժող ճանաչելը.

11) Տուժողի օրինական և լիազոր ներկայացուցիչները, նրանց իրավունքները և պարտականությունները.

12) Քրեական վարույթին պաշտպանի մասնակցության հիմքերը, պայմանները, պաշտպանի պարտադիր մասնակցությունը, պաշտպանից հրաժարվելը.

13) Վկայի վարութային կարգավիճակը, անձինք ովքեր չեն կարող հարցաքննվել որպես վկա.

14) Ապացույցի տեսակները.

15) Ապացույցների թույլատրելիությունը և դրանց օգտագործման

սահմանափակումները.

16) Ապացուցման հասկացությունը և ապացուցման ենթակա փաստական հանգամանքները.

17) Որոշակի ապացույցներով հաստատվող հանգամանքները.

18) Ձերբակալման տեսակները, ժամկետների հաշվարկման կարգը և ձերբակալումից ազատելու հիմքերը.

19) Ձերբակալվածի նվազագույն իրավունքները.

20)Խափանման միջոցների տեսակները, կիրառման իրավաչափությունը.

21) Կալանքը որպես խափանման միջոց, կալանքի իրավաչափության առանձնահատկությունները.

22) Կալանքի տակ պահելու ժամկետները.

23)Այլընտրանքային խափանման միջոցների իրավաչափության առանձնահատկությունները.

24)Գրավի և պաշտոնավարման կասեցման հասկացությունները, դրանց կիրառման առանձնահատկությունները.

25) Բացակայության արգելքի և երաշխավորության հասկացությունները, դրանց կիրառման կարգը.

26) Դաստիարակչական հսկողության և զինվորական հսկողության հասկացությունները դրանց կիրառման կարգը.

27) Խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու հիմքերը և կարգը.

28) Գույքի արգելադրման նպատակը, հիմքերը, կարգը և տևողությունը.

29)Քրեական վարույթին ներգրավված անձանց նկատմամբ կիրառվող հատուկ պաշտպանության միջոցների տեսակները, դրանց կիրառման հիմքերը և կարգը.

30) Քրեական վարույթի ընթացքում հատուցման ենթակա գույքային վնասը, գույքային հայցի հարուցման և լուծման կարգը.

31) Վարույթն իրականացնող մարմնին հարկադրաբար ներկայացնելու հիմքերը և կարգը.

32) Վարույթին մասնակցող փաստաբանին, լիազոր ներկայացուցչին և օրինական

ներկայացուցչին վարույթից հեռացնելու   հիմքերը և կարգը.

33)  Քրեական վարույթին ներգրավված անձի իրավունքների և պարտականությունների պարզաբանման կարգը, ծանուցման եղանակները և դրա պատշաճությունը.

34)  Միջնորդության հասկացությունը, հարուցման, լուծման և միջնորդության վերաբերյալ կայացված որոշման բողոքարկման կարգը.

35)  Քրեական   վարույթ նախաձեռնելու պարտականությունը, հաղորդումների տեսակները  և դրանց ներկայացվող պահանջները.

36)  Քրեական   վարույթ նախաձեռնելու կարգը, քրեական վարույթ չնախաձեռնելը.

37)  Նախաքննության կատարման վայրը և սկիզբը.

38)  Նախաքննության կատարումը քննչական խմբի կողմից, քննչական խմբի ղեկավարի լիազորությունները.

39)  Հետաքննություն  կատարելու հիմքը, սկիզբը և ավարտը.

40)Հանրային հետապնդում հարուցելու հիմքը և կարգը.

41)  Մեղադրանք   ներկայացնելու, մեղադրանքը փոփոխելու և լրացնելու  կարգը.

42)  Հանրային քրեական հետապնդման ժամկետները, դրանք կասեցնելու, վերսկսելու  հիմքերը և կարգը.

43) Հանրային քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու կարգը.

44) Քրեական վարույթով մեղադրական եզրակացություն կազմելը, մեղադրական եզրակացությունը և դրա հավելվածները.

45) Մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերով ստուգման ենթակա հանգամանքները և դատախազի կողմից կայացվող որոշումները.

46) Քրեական վարույթը կարճելու և կարճման որոշումը բողոքարկելու կարգը.

47)  Քրեական   վարույթի նյութերին ծանոթանալու կարգը.

48)  Քննչական գործողությունների  տեսակները, կատարմանը հիմքերը.

49) Քննչական գործողությունների մասնակիցները և նրանց իրավունքների պաշտպանության ընդհանուր երաշխիքները.

50)  Անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի,

խլություն, համրություն կամ ծանր հիվանդություն ունեցող անձի մասնակցությամբ կատարվող քննչական գործողությունների առանձնահատկությունները.

51) Հարցաքննության ընդհանուր պայմանները.

52) Վկայի և տուժողի հարցաքննության դատավարական կարգը.

53) Ձերբակալվածի և մեղադրյալի հարցաքննության դատավարական կարգը.

54) Առերեսման դատավարական կարգը.

55) Ցուցմունքը տեղում ստուգելու  և փորձարարության դատավարական կարգը.

56) Զննում, արտաշիրմում և քննում կատարելու դատավարական կարգը.

57) Ճանաչման ընդհանուր պայմանները և առանձնահատկությունները.

58) Տեղեկատվության պահանջի հիմքերը և  դատավարական կարգը.

59) Խուզարկություն և առգրավում կատարելու հիմքերն ու դատավարական կարգը.

60) Գաղտնի քննչական գործողությունների տեսակները, դրանց կատարման հիմքը և  պայմանները.

61) Գաղտնի քննչական գործողությունների իրավաչափության   երաշխիքները.

62) Փորձաքննության նպատակը, սահմանները, այն կատարելու հիմքը և կարգը.

63) Փորձաքննությունների տեսակները.

64) Փորձաքննության համար նմուշ ստանալը.

65) Ցուցմունքի դատական դեպոնացման կարգը.

66) Անչափահասներին վերագրվող հանցանքների վերաբերյալ վարույթի առանձնահատկությունները.

67) Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթի առանձնահատկությունները.

68) Իրավաբանական անձի վերաբերյալ վարույթի առանձնահատկությունները.

69) Համագործակցության վարույթի նպատակը, կիրառելու հիմքը, համագործակցության միջնորդություն ներկայացնելու, համաձայնագիր կազմելու և համագործակցությունից հրաժարվելու կարգը.

70) Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթի /հեռակա վարույթ/ հիմքը և պայմանները.

3. **Քրեագիտություն.**

1) Նախաքննության պլանավորումը և քննչական պլանը, սկզբունքները, նպատակը, տեսակները.

2) Քննչական իրավիճակի հասկացությունը, դրա բաղադրիչները.

3) Քրեագիտական նույնականացման (իդենտիֆիկացիայի) կիրառումը քննիչի աշխատանքում.

4) Քրեագիտական դիագնոստիկայի կիրառումը քննիչի աշխատանքում.

5) Քննչական վարկածները և դրանց ստուգմանն ուղղված գործողությունները.

6) Դեպքի վայրի զննության հասկացությունը, եղանակները և առանձնահատկությունները.

7) Դեպքի վայրի զննության առանձնահատկությունները դիակի առկայության դեպքում.

8) Դեպքի վայրի զննության ընթացքում առարկաներ, հետքեր (օբյեկտներ) վերցնելու տակտիկական առանձնահատկությունները.

9) Լուսանկարահանումը և տեսանկարահանումը դեպքի վայրի զննության ընթացքում և դրանց ձևերը.

10) Հետքերի քրեագիտական հասկացությունը և դասակարգումը.

11) Մարդու ձեռքի և ոտքի հետքերը, մատնահետքերը և կենսաբանական այլ հետքերը (տեսակները, հայտնաբերումը և ֆիքսումը).

12) Տրանսպորտային միջոցների հետքերը.

13) Հանցագործության գործիքների հետքերը.

14) Հարցաքննության պլանավորումն ու կազմակերպումը.

15) Անչափահասի հարցաքննության տակտիկական առանձնահատկությունները.

16) Ձերբակալվածի և մեղադրյալի հարցաքննության տակտիկական առանձնահատկությունները.

17) Տուժողի և վկայի հարցաքննության տակտիկական առանձնահատկությունները.

18) Խուզարկության և առգրավման տակտիկական առանձնահատկությունները.

19) Փորձարարության տակտիկական առանձնահատկությունները.

20)Ճանաչման տակտիկական առանձնահատկությունները.

21) Առերեսման տակտիկական առանձնահատկությունները.

22) Դատաբժշկական փորձաքննություն նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

23) Դատահոգեբուժական և դատահոգեբանական փորձաքննություններ նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

24) Դատակենսաբանական փորձաքննություն նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը, ԴՆԹ իդենտիֆիկացիոն հետազոտությունների նշանակությունը քննության համար.

25) Դատաձգաբանական փորձաքննություն նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

26) Դատամատնադրոշմային փորձաքննություն նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

27) Դատահետքաբանական փորձաքննություն նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

28)Դատաավտոտեխնիկական փորձաքննություն նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

29)Դատապայթյունատեխնիկական փորձաքննություն նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

30) Դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

31) Դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

32)Դատահաշվապահական և դատաֆինանսատնտեսագիտական փորձաքննություններ նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

33)Փաստաթղթերի տեխնիկական հետազոտության վերաբերյալ փորձաքննություններ նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

34) Սպանության քննության առանձնահատկությունները (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

35) Առողջությանը վնաս պատճառելու  քննության առանձնահատկությունները (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

36) Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման քննության առանձնահատկությունները (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

37) Սեքսուալ բնույթի բռնի գործողությունների քննության առանձնահատկությունները (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

38) Շինարարական, լեռնահանքային կամ այլ աշխատանքների կատարման ընթացքում աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության ապահովման կանոնները խախտելու քննության առանձնահատկությունները.

39) Ավազակության և կողոպուտի քննության մեթոդիկան (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

40) Գողության քննության մեթոդիկան, (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

41) Խարդախության քննության մեթոդիկան (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

42) Համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարվող հափշտակությունների քննության մեթոդիկան (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

43) Շորթման քննության մեթոդիկան (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

44) Խուլիգանության քննության մեթոդիկան.

45) Թմրամիջոցների ապօրինի շրջանառության գործերով քննության մեթոդիկան (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

46) Իրացնելու նպատակով կեղծ արժույթ, արտարժույթ, արժեթուղթ,

վճարահաշվարկային այլ փաստաթուղթ կամ վճարային գործիք պատրաստելու, պահելու, տեղափոխելու, առաքելու կամ ձեռք բերելու կամ դրանք իրացնելու քննության մեթոդիկան.

47) Ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու քննության մեթոդիկան (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

48) Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու քննության մեթոդիկան (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

49) Սուտ մատնության քննության առանձնահատկությունները (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

50) Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների քննության առանձնահատկությունները (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ)։»։

Հավելված N  2
Հայաստանի  Հանրապետության
քննչական կոմիտեի նախագահի
15.12.2021թ.
թիվ 171/2-Լ հրամանի
(հավելվածը խմբ. 29.08.2022. N 137-Լ,
04.04.2025. N 100-Լ)

ՀԱՐՑԱՇԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ  ԿՈՄԻՏԵՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ

**1. <u>Հայաստանի Հանրապետության քրեական  իրավունք.</u>**

1) Հանցանքի հասկացությունը,  հատկանիշները և  տեսակները.

2) Շարունակվող և տևող հանցագործությունները.

3) Հանցագործությունների համակցությունը.

4) Մեղքի հասկացությունը և ձևերը.

5) Քրեական պատասխանատվության սուբյեկտի և հատուկ սուբյեկտի հասկացությունները.

6) Սխալը և դրա քրեաիրավական նշանակությունը.

7) Քրեական պատասխանատվության հասկացությունը և հիմքը.

8) Հանցագործության նախապատրաստությունը.

9) Հանցափորձը և դրա տեսակները.

10) Հանցակցության հասկացությունը և  հատկանիշները.

11) Հանցակիցների տեսակները և նրանց բնութագիրը, հանցակիցների պատասխանատվությունը, հանցակցի սահմանազանցումը.

12) Անմեղսունակությունը.

13) Անհրաժեշտ պաշտպանությունը.

14) Ծայրահեղ անհրաժեշտությունը.

15) Քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները.

16) Քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը.

17) Սպանության քրեաիրավական բնութագիրը.

18) Առանձին դաժանությամբ սպանության քրեաիրավական բնութագիրը.

19) Այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության քրեաիրավական բնութագիրը.

20) Հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանության քրեաիրավական բնութագիրը.

21) Ինքնասպանության հասցնելու, ինքնասպանության հակելու, ինքնասպանությանը նպաստելու քրեաիրավական բնութագիրը.

22) Անզգուշությամբ կյանքից զրկելու քրեաիրավական բնութագիրը.

23) Առողջությանը ծանր վնաս պատճառելու քրեաիրավական բնութագիրը.

24) Առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու քրեաիրավական բնութագիրը.

25) Մարդուն առևանգելու և ազատությունից ապօրինի զրկելու քրեաիրավական բնութագիրը.

26) Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման քրեաիրավական բնութագիրը.

27) Հոգեկան ներգործության և ֆիզիկական ներգործության քրեաիրավական բնութագիրը.

28) Բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու քրեաիրավական բնութագիրը.

29) Անչափահասին հանցանքի կատարմանը հակելու կամ դրան մասնակից դարձնելու քրեաիրավական բնութագիրը.

30) Ավազակության քրեաիրավական բնութագիրը.

31) Գողության և կողոպուտի որակման առանձնահատկությունները.

32) Խարդախության քրեաիրավական բնութագիրը.

33) Վստահված գույքը հափշտակելու քրեաիրավական բնութագիրը.

34) Շորթման քրեաիրավական բնութագիրը.

35) Գույքը ոչնչացնելու կամ վնասելու քրեաիրավական բնութագիրը.

36) Ապօրինի ձեռնարկատիրական գործունեության քրեաիրավական բնութագիրը.

37) Հանցավոր ճանապարհով ստացված գույք ձեռք բերելու, իրացնելու կամ իրացմանն աջակցելու քրեաիրավական բնութագիրը.

38) Փողերի լվացման քրեաիրավական բնութագիրը.

39) Խուլիգանության քրեաիրավական բնութագիրը.

40) Պատանդ վերցնելու կամ պահելու քրեաիրավական բնութագիրը.

41) Օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաք կազմակերպելու կամ անցկացնելու քրեաիրավական բնութագիրը.

42) Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելու քրեաիրավական բնութագիրը.

43) Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված անձի կողմից տրանսպորտային միջոցներ վարելու կամ այդ անձի կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից հարբած (ոչ սթափ) վիճակում տրանսպորտային միջոց վարելու կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելու կամ խուսափելու քրեաիրավական բնութագիրը.

44) Իրացնելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու քրեաիրավական բնութագիրը.

45) Ինքնիրավչության քրեաիրավական բնութագիրը.

46) Պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից խուսափելու քրեաիրավական բնութագիրը.

47) Սուտ մատնության քրեաիրավական բնութագիրը.

48) Հրաման չկատարելու քրեաիրավական բնութագիրը.

49) Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու կամ ժամանակին ծառայության վայր չներկայանալու քրեաիրավական բնութագիրը.

50) Դասալքության քրեաիրավական բնութագիրը:

**2. <u>Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության իրավունք.</u>**

1) Քրեական հետապնդման հասկացությունը և տեսակները.

2) Քրեական հետապնդումը բացառող հանգամանքները և քրեական վարույթի կարճման հիմքերը.

3) Քննիչը որպես քրեական վարույթի հանրային մասնակից և նրա լիազորությունները.

4) Քննչական մարմնի ղեկավարի լիազորությունները.

5) Մեղադրյալի և մեղադրյալի օրինական ներկայացուցչի իրավունքները և պարտականությունները.

6) Տուժողի իրավունքները և պարտականությունները.

7) Մահացած տուժողի կամ տուժող ճանաչվելու ենթակա անձի փոխարեն տուժող ճանաչելը.

8) Տուժողի օրինական և լիազոր ներկայացուցիչները, նրանց իրավունքները և պարտականությունները.

9) Քրեական վարույթին պաշտպանի մասնակցության հիմքերը, պայմանները, պաշտպանի պարտադիր մասնակցությունը, պաշտպանից հրաժարվելը.

10) Վկայի վարութային կարգավիճակը, անձինք ովքեր չեն կարող հարցաքննվել որպես վկա.

11) Ապացույցի տեսակները.

12) Ապացույցների թույլատրելիությունը և դրանց օգտագործման սահմանափակումները.

13) Ապացուցման հասկացությունը և ապացուցման ենթակա փաստական հանգամանքները.

14) Որոշակի ապացույցներով հաստատվող հանգամանքները.

15) Ձերբակալման տեսակները, ժամկետների հաշվարկման կարգը և ձերբակալումից ազատելու հիմքերը.

16) Ձերբակալվածի նվազագույն իրավունքները.

17) Խափանման միջոցների տեսակները, կիրառման իրավաչափությունը.

18) Կալանքը որպես խափանման միջոց, կալանքի իրավաչափության առանձնահատկությունները.

19) Կալանքի տակ պահելու ժամկետները.

20) Այլընտրանքային խափանման միջոցների իրավաչափության առանձնահատկությունները.

21) Գրավի և պաշտոնավարման կասեցման հասկացությունները, դրանց կիրառման առանձնահատկությունները.

22) Բացակայելու արգելքի և երաշխավորության հասկացությունները, դրանց կիրառման կարգը.

23) Դաստիարակչական հսկողության և զինվորական հսկողության հասկացությունները դրանց կիրառման կարգը.

24) Խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու հիմքերը և կարգը.

25) Գույքի արգելադրման նպատակը, հիմքերը, կարգը և տևողությունը.

26) Քրեական վարույթին ներգրավված անձանց նկատմամբ կիրառվող հատուկ պաշտպանության միջոցների տեսակները, դրանց կիրառման հիմքերը և կարգը.

27) Քրեական վարույթի ընթացքում հատուցման ենթակա գույքային վնասը, գույքային հայցի հարուցման և լուծման կարգը.

28) Վարույթն իրականացնող մարմնին հարկադրաբար ներկայացնելու հիմքերը և կարգը.

29) Վարույթին մասնակցող փաստաբանին, լիազոր ներկայացուցչին և օրինական ներկայացուցչին վարույթից հեռացնելու հիմքերը և կարգը.

30) Քրեական վարույթին ներգրավված անձի իրավունքների և պարտականությունների պարզաբանման կարգը, ծանուցման եղանակները և դրա պատշաճությունը.

31) Միջնորդության հասկացությունը, հարուցման, լուծման և միջնորդության վերաբերյալ կայացված որոշման բողոքարկման կարգը.

32) Քրեական վարույթ նախաձեռնելու պարտականությունը, հաղորդումների տեսակները և դրանց ներկայացվող պահանջները.

33) Քրեական վարույթ նախաձեռնելու կարգը, քրեական վարույթ չնախաձեռնելը.

34) Նախաքննության կատարման վայրը և սկիզբը.

35) Նախաքննության կատարումը քննչական խմբի կողմից, քննչական խմբի ղեկավարի լիազորությունները.

36) Հետաքննություն կատարելու հիմքը, սկիզբը և ավարտը.

37) Հանրային հետապնդում հարուցելու հիմքը և կարգը.

38) Մեղադրանք ներկայացնելու, մեղադրանքը փոփոխելու և լրացնելու կարգը.

39) Հանրային քրեական հետապնդման ժամկետները, դրանք կասեցնելու, վերսկսելու հիմքերը և կարգը.

40) Հանրային քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու կարգը.

41) Քրեական վարույթով մեղադրական եզրակացություն կազմելը, մեղադրական եզրակացությունը և դրա հավելվածները.

42) Մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերով ստուգման ենթակա հանգամանքները և դատախազի կողմից կայացվող որոշումները.

43) Քրեական վարույթը կարճելու և կարճման որոշումը բողոքարկելու կարգը.

44) Քրեական վարույթի նյութերին ծանոթանալու կարգը.

45) Քննչական գործողությունների տեսակները, կատարմանը հիմքերը.

46) Քննչական գործողությունների մասնակիցները և նրանց իրավունքների պաշտպանության ընդհանուր երաշխիքները.

47) Անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի, խլություն, համրություն կամ ծանր հիվանդություն ունեցող անձի մասնակցությամբ կատարվող քննչական գործողությունների առանձնահատկությունները.

48) Հարցաքննության ընդհանուր պայմանները.

49) Վկայի և տուժողի հարցաքննության դատավարական կարգը.

50) Ձերբակալվածի և մեղադրյալի հարցաքննության դատավարական կարգը.

51) Առերեսման դատավարական կարգը.

52) Ցուցմունքը տեղում ստուգելու և փորձարարության դատավարական կարգը.

53) Զննում, արտաշիրմում և քննում կատարելու դատավարական կարգը.

54) Ճանաչման ընդհանուր պայմանները և առանձնահատկությունները.

55) Տեղեկատվության պահանջի հիմքերը և դատավարական կարգը.

56) Խուզարկություն և առգրավում կատարելու հիմքերն ու դատավարական կարգը.

57) Գաղտնի քննչական գործողությունների տեսակները, դրանց կատարման հիմքը և պայմանները.

58) Գաղտնի քննչական գործողությունների իրավաչափության երաշխիքները.

59) Փորձաքննության նպատակը, սահմանները, այն կատարելու հիմքը և կարգը.

60) Փորձաքննությունների տեսակները.

61) Փորձաքննության համար նմուշ ստանալը.

62) Ապացուցողական գործողությունների կատարման դատական երաշխիքների շրջանակը, ապացուցողական գործողություններ կատարելու կամ գաղտնի քննչական գործողություններ կատարելու ժամկետը երկարաձգելու վարույթ հարուցելու կարգը.

63) Սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության նկատմամբ դատական երաշխիքների շրջանակը, իրավաչափության ստուգման վարույթի իրականացման կարգը և սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության հաստատման միջնորդության վերաբերյալ ընդունվող որոշումները.

64) Հանրային մասնակիցների վարութային ակտերի իրավաչափության դատական երաշխիքների շրջանակը և բողոքարկման կարգը.

65) Ցուցմունքի դատական դեպոնացման կարգը.

66) Անչափահասներին վերագրվող հանցանքների վերաբերյալ վարույթի առանձնահատկությունները.

67) Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթի առանձնահատկությունները.

68) Իրավաբանական անձի վերաբերյալ վարույթի առանձնահատկությունները.

69) Համագործակցության վարույթի նպատակը, կիրառելու հիմքը, համագործակցության միջնորդություն ներկայացնելու, համաձայնագիր կազմելու և համագործակցությունից հրաժարվելու կարգը.

70) Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթի հիմքը և պայմանները.

**3. <u>Քրեագիտություն.</u>**

1) Նախաքննության պլանավորումը և քննչական պլանը, սկզբունքները, նպատակը, տեսակները.

2) Քննչական վարկածները և դրանց ստուգմանն ուղղված գործողությունները.

3) Դեպքի վայրի զննության հասկացությունը, եղանակները և առանձնահատկությունները.

4) Դեպքի վայրի զննության առանձնահատկությունները դիակի առկայության դեպքում.

5) Դեպքի վայրի զննության ընթացքում առարկաներ, հետքեր (օբյեկտներ) վերցնելու տակտիկական առանձնահատկությունները.

6) Հետքերի քրեագիտական հասկացությունը և դասակարգումը.

7) Մարդու ձեռքի և ոտքի հետքերը, մատնահետքերը և կենսաբանական այլ հետքերը (տեսակները, հայտնաբերումը և ֆիքսումը).

8) Տրանսպորտային միջոցների հետքերը.

9) Հանցագործության գործիքների հետքերը.

10) Հարցաքննության պլանավորումն ու կազմակերպումը.

11) Անչափահասի հարցաքննության տակտիկական առանձնահատկությունները.

12) Ձերբակալվածի և մեղադրյալի հարցաքննության տակտիկական առանձնահատկությունները.

13) Տուժողի և վկայի հարցաքննության տակտիկական առանձնահատկությունները.

14) Խուզարկության տակտիկական առանձնահատկությունները.

15) Փորձարարության տակտիկական առանձնահատկությունները.

16) Առերեսման տակտիկական առանձնահատկությունները.

17) Դատաբժշկական փորձաքննություն նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

18) Դատահոգեբուժական և դատահոգեբանական փորձաքննություններ նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

19) Դատակենսաբանական փորձաքննություն նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը, ԴՆԹ իդենտիֆիկացիոն հետազոտությունների նշանակությունը քննության համար.

20) Դատաձգաբանական փորձաքննություն նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

21) Դատամատնադրոշմային փորձաքննություն նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

22) Դատահետքաբանական փորձաքննություն նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

23) Դատաավտոտեխնիկական փորձաքննություն նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

24) Դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

25) Դատահաշվապահական և դատաֆինանսատնտեսագիտական փորձաքննություններ նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

26) Փաստաթղթերի տեխնիկական հետազոտության վերաբերյալ փորձաքննություններ նշանակելու հիմքերը և պարզաբանման ենթակա հարցերը.

27) Սպանության քննության առանձնահատկությունները (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

28) Առողջությանը վնաս պատճառելու քննության առանձնահատկությունները (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

29) Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման քննության առանձնահատկությունները (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

30) Սեքսուալ բնույթի բռնի գործողությունների քննության առանձնահատկությունները (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

31) Շինարարական, լեռնահանքային կամ այլ աշխատանքների կատարման ընթացքում աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության ապահովման կանոնները կամ պահանջները խախտելու քննության առանձնահատկությունները.

32) Ավազակության և կողոպուտի քննության մեթոդիկան (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

33) Գողության քննության մեթոդիկան, (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

34) Խարդախության քննության մեթոդիկան (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

35) Խուլիգանության քննության մեթոդիկան.

36) Թմրամիջոցների ապօրինի շրջանառության գործերով քննության մեթոդիկան (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

37) Իրացնելու նպատակով կեղծ արժույթ, արտարժույթ, արժեթղթեր, վճարահաշվարկային այլ փաստաթղթեր կամ վճարային գործիքներ պատրաստելու, պահելու, տեղափոխելու, առաքելու, ձեռք բերելու կամ դրանք իրացնելու քննության մեթոդիկան.

38) Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու քննության մեթոդիկան (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

39) Սուտ մատնության քննության առանձնահատկությունները (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ).

40) Զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների քննության առանձնահատկությունները (վարկածներ, անհետաձգելի քննչական գործողություններ, սկզբնական և հետագա փուլերի գործողություններ):

**4. <u>«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի կողմից ընդունված ներքին իրավական ակտեր և Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումներ.</u>**

1) Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի իրավունքները և պարտականությունները («Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք).

2) Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կիրառվող խրախուսման միջոցների տեսակները և նշանակելու ընթացակարգը («Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք).

3) Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժի տեսակները և նշանակելու ընթացակարգը («Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք).

4) Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կադրերի ռեզերվը («Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք).

5) Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի ատեստավորումը («Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք).

6) Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կիրառվող սահմանափակումները և շահերի բախումը («Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք).

7) Կոմիտեում ծառայողական վերադասությունը (Կոմիտեի նախագահի 2015 թվականի հունիսի 10-ի N 55-Լ հրաման).

8) Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց գործուղման կարգը (Կոմիտեի նախագահի 2016 թվականի օգոստոսի 10-ի N 42-Լ հրաման)

9) Նախնական ուսումնասիրություն կատարելու առիթները և նախնական ուսումնասիրության ընթացքում պարզաբանման ենթակա հանգամանքները (Կոմիտեի նախագահի 2018 թվականի սեպտեմբերի 5-ի N 147-Լ հրաման).

10) Խափանման միջոցներ կիրառելիս Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը ժամանակավորապես վերցնելը և անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրելը (Կոմիտեի նախագահի 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 91-Լ հանձնարարական).

11) Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների հետ գրագրության կազմակերպման ընթացակարգը (Կոմիտեի նախագահի 2021 թվականի մարտի 23-ի N 32-Լ հանձնարարական).

12) Հանրային քրեական հետապնդման ենթակա անձը հայտնի չլինելու դեպքերով նախաքննության կազմակերպման առանձնահատկությունները (Կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 25-ի N 135-Լ հանձնարարական).

13) Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակի ձևավորման ընթացակարգը (Կոմիտեի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 15-ի N 171-Լ հրաման).

14) Մինչդատական վարույթ իրականացնելու ընթացքում հայտնաբերված առերևույթ վարչական իրավախախտումների վերաբերյալ իրավասու մարմնին իրազեկելը (Կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 31-ի N 139-Լ հանձնարարական)

15) Կոմիտեի ստորաբաժանումներում հերթապահություն սահմանելու գործընթացը (Կոմիտեի նախագահի 2015 թվականի ապրիլի 22-ի N 24-Լ հրաման).

16) Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կողմից Հայաստանի Հանրապետությունից մեկնելու վերաբերյալ իրազեկելը (Կոմիտեի նախագահի 2023 թվականի հունիսի 28-ի N 170-Լ հանձնարարական)

17) Աշխատանքի ռեժիմը և հանգստի ժամանակը Կոմիտեում (Կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 93-Լ հրաման).

18) Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի վարքագծի կանոնները պաշտոնեական հարաբերություններում (Կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 93-Լ հրաման).

19) Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի վարքագծի կանոնները ոչ պաշտոնեական հարաբերություններում (Կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 93-Լ հրաման).

20) Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի արտաքին տեսքին ներկայացվող և սոցիալական ցանցերից օգտվելու պահանջները (Կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 93-Լ հրաման).

21) Վճռաբեկ դատարանի 2024 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՔԴ/0196/01/17 նախադեպային որոշումը նոր քրեական օրենսգրքով հանցանքի դասակարգման խմբի փոփոխության դեպքում վաղեմության ժամկետների վերաբերյալ.

22) Վճռաբեկ դատարանի 2023 թվականի նոյեմբերի 10-ի թիվ ԵԴ/1424/01/21 նախադեպային որոշումը զենքը կամովին հանձնելու վերաբերյալ նախկին և գործող քրեական օրենսգրքերով նախատեսված իրավակարգավորումների վերաբերյալ.

23) Վճռաբեկ դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 6–ի թիվ ՀԿԴ/0121/01/22 նախադեպային որոշումը պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալը հանցակազմի «խոշոր չափ» և «առանձնապես խոշոր չափ» հասկացությունների մեկնաբանման վերաբերյալ.

24) Վճռաբեկ դատարանի 2024 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ԳԴ4/0004/01/19 նախադեպային որոշումը անհրաժեշտ պաշտպանության, սպանության, առողջությանը ծանր և միջին ծանրության վնաս պատճառելն անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ կատարելու վերաբերյալ.

25) Վճռաբեկ դատարանի 2023 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴ/0129/01/20 նախադեպային որոշումը բնակարան ապօրինի մուտք գործելով գույքի գաղտնի հափշտակության և ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմերի հարաբերակցության վերաբերյալ.

26) Վճռաբեկ դատարանի 2024 թվականի հունիսի 7-ի թիվ ԵԴ/0363/01/22 նախադեպային որոշումը մեղադրյալի բացակայությամբ վարույթը (հեռակա վարույթը) կարգավորող նորմերի՝ նախքան դրանց ընդունումն սկսված քրեական վարույթներով կիրառելու վերաբերյալ.

27) Վճռաբեկ դատարանի 2024 թվականի հուլիսի 30-ի նախադեպային որոշումը փողերի լվացման հանցակազմով խափանման միջոց կիրառելիս հիմնավոր կասկածի պայմանի վերաբերյալ.

28) Վճռաբեկ դատարանի 2024 թվականի ապրիլի 15-ի թիվ ՀԿԴ/0030/06/23 նախադեպային որոշումը խափանման միջոց կիրառելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը հարուցելու պահին վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի լիազորությունների վերաբերյալ.

29) Վճռաբեկ դատարանի 2024 թվականի փետրվարի 23–ի թիվ ԵԴ/1206/07/23 նախադեպային որոշումը քրեական պատասխանատվություն չնախատեսող ենթադրյալ արարքի պարագայում քրեադատավարական գործիքակազմի՝ բնակարանի խուզարկության իրականացման հնարավորության իրավաչափության վերաբերյալ.

30) Վճռաբեկ դատարանի 2024 թվականի հունիսի 21-ի թիվ 09/08.07.2021 և 05/08.07.2021 նախադեպային որոշումները «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարման սահմանների վերաբերյալ, որը mutatis mutandis կիրառելի է նաև «ներքին դիտում» գաղտնի քննչական գործողության համար:

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի նախագահի
15.12.2021թ.
թիվ 171/2 -Լ հրամանի
(հավելվածն ուժը կորցր. 04.04.2025. N 100-Լ)

Հավելված N 4
Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի նախագահի
15.12.2021թ.
թիվ 171/2 -Լ հրամանի
(հավելվածն ուժը կորցր. 04.04.2025. N 100-Լ)